Այդ հեղուկը երկու հաւասար մասի բաժնելով, նա մէկը խմեց, իսկ միւսից փաթեթ շինեց և դրեց վզին, խլիրդի արտաքին մասի վրայ։

Երկու ամիս այսպէս բժշկուելուց յետ, նա բոլորովին առողջացաւ և նրա բժիշկը, դոքտոր Գօրդօնը, որ հէնց սկզբից դիտում էր այս բժշկութիւնը, միանգամայն զարմացած էր հետևանքի վրայ և այդ մասին հաղորդեց Լօնդօնի մի քանի գիտնական ընկերութիւններին։ Խլիրդի այսօրինակ բժշկութիւնը, որ մինչև այժմ համարւում էր անբուժելի, ահագին իրարանցում առաջ բերեց Անգլիայում։

Գ. ԲԾԱՒՈՐ ՀԱՐԻՆՔԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Օդէսայից Կ. Ղազարեանցը գրում է «З. Р.» լրագրին. բծաւոր հարինքի դէմ, որ այնքան շատ զոհեր է տանում, առանց չափազանցելու կարելի է ասել, որ գտնուած է նոր յատուկ տեղ։ Այս միջոցը պրոֆ. Էրլիխի գտած 606-ը կամ դիօկսիդիամի-դօարսէնօբէնզոլն է։ Այս դեղը առաջինը գործադրեց բծաւոր հարինքի դէմ Նօվօրօս. համալսարանի պրոֆ. Լէվաշեվը։ Հետևանքները աչք ծակող էին 0,6—0,7 թոյլերի, և 0,9 ամրակազմների համար. տաքութիւնը բոպէարար ընկնում է, ինքնազգացութիւնը լաւանում և առողջութիւնը կանխում։ Սրսկումը կատարւում է ներարկումով։ Նօվօրօս. համալսարանի կլինիկում գտնուած 14 հիւանդներից, որոնց վրայ գործ դրուեց Էրլիխի պրէպարատը, միայն մէկը ջնասուեց, այն էլ նրա համար, որ նա շատ ուշ էր դիմել բժշկուելու համար։ Այսպիսով Էրլիխի պրէպարատը, բացի լուէսից, փրկում է և մի ուրիշ, կեանքին ոչ պակաս վտանգ սպառնող հիւանդութիւնից, այն է բծաւոր հարինքից։